Հավելված
Արցախի ներդրումային հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
«____» ____________ 2011թ.
թիվ _____ որոշման

ԱՐՑԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ-2011

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն


*Նախաբան.........................................................................................................................   3*

*1.  Արցախի ներդրումային հիմնադրամի ամրապնդում ու գործունեության ընդլայնում.......   5*

*2. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային  աջակցություն.................................   6*

*2.1 ՓՄՁ սուբյեկտներին  ֆինանսական աջակցություն................................................   6*

*2.2 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման աջակցություն..............................................................   7*

*3. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն….12*

*4. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանն աջակցություն...................................................................................   13*

*5. ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն..............................................................................................................15*

*6. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցություն......................................................................... 15*

*6.1  Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների  սուբսիդավորում.............................. 15*

*6.2  Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում.......................................................................21*

*6.3  Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում և գնում ...................................................................... 22*

*7. ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցություն…………………………………………… 23*

*8. Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին......................................  24*

*9. Նպատակային ծրագրեր........................................................................................... ......... 26*

*10. Մոնիթորինգ........................................................................................................................ 27*

*11. Հիմնադրամի գործունեության ֆինանսական ցուցանիշները.................................... ....... 28*

*12. Հավելվածներ …………………………………………………………………………….. 31*

## Նախաբան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրությունը (այսուհետ՝ ՓՄՁ) ստանալով պետական աջակցություն զարգանում է, իր նշանակալի ազդեցությունը թողնելով երկրի տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: 2009 թվականին արձանագրված տվյալների համաձայն ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 29.2%՝ 0.2 տոկոսային կետով գերազանցելով 2008 թվականի մակարդակը, ստեղծվել են մոտ 466 նոր ՓՄՁ սուբյեկտներ: ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատողների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 2009թ. կազմել է 44.9%՝ 2008թ. 47.9%-ի դիմաց: ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը կազմել է 97.8%, որոնց բաժինը արտադրության ծավալում կազմել է 51.9%՝ 2008 թվականի 52.7%-ի դիմաց:

ԼՂՀ-ում տարեցտարի ամրապնդվում է ՓՄՁ պետական աջակցության համակարգը, ընդլայնվում են ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող պետական աջակցության ձևերը, ծավալներն ու աշխարհագրությունը, կատարելագործվում են աջակցության տրամադրման մեխանիզմները և ընթացակարգերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ՓՄՁ պետական աջակցության ծրագիրն իրականացնող հիմնական կառույցը Արցախի ներդրումային հիմնադրամն է /այսուհետ՝ Հիմնադրամ/, որի գործունեության շրջանակներում իրականացվում են Արցախում ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրային միջոցառումներ՝ ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերելով աջակցություն հետևյալ ուղղություններով.

- ֆինանսական,
- տեղեկատվական,
- խորհրդատվական,
- ուսուցողական:

Հիմնադրամը հանդիսանում է նաև հիփոթեքային վարկավորմամբ ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագիրն իրականացնող մարմինը:

Արցախի ներդրումային հիմնադրամը /պետ. գր. N44416011309 առ 01.11.2007/ իր գործունեությունն իրականացնում է Ստեփանակերտ քաղաքի Տիգրան Մեծի 25 հասցեում գտնվող գրասենյակի միջոցով:

Հիմնադրամի կանոնադրական նպատակներն են.

- ԼՂՀ սոցիալ-տնտեսական տարբեր բնագավառների զարգացմանը նպաստելը,
- սկսնակ և գործող տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն տրամադրելը:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- հոգաբարձուների խորհուրդը,
- կառավարիչը՝ գլխավոր տնօրենը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է: Խորհուրդը գլխավորում է խորհրդի նախագահը, որն ի պաշտոնե ԼՂՀ վարչապետն է: Խորհրդի անդամներն ի պաշտոնե՝ ԼՂՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարն է, ԼՂՀ փոխվարչապետ, ֆինանսների նախարարը, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարը, ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարը:

Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է գլխավոր տնօրենը:

Հիմնադրամի կառուցվածքը համապատասխանում է միջազգային պրակտիկայում օգտագործվող որակի կառավարման և մասնագիտացման սկզբունքներին: Այն ենթադրում է հիմնադրամի կողմից իրագործվելիք ռազմավարական խնդիրների ծրագրավորում և փուլային կատարում՝ համապատասխան հսկողություն և վերահսկողություն իրականացնելով առանձին փուլերի ամփոփ ցուցանիշների և երևույթների նկատմամբ:

Հիմնադրամի կառուցվածքի հիմնական գործառնական մասը բաժանված է երկու ուղղությունների՝ ծրագրերի նախապատրաստում և սպասարկում, որոնք համակարգվում են գլխավոր տնօրենի երկու տեղակալների կողմից: Առաջին ուղղությունն ընդգրկում է հիմնադրամի կողմից իրագործվելիք ծրագրերի մշակման և նախապատրաստման աշխատանքներն, ինչպես նաև ընթացակարգային, մեթոդաբանական և վերլուծական

հարցերը, երկրորդը՝ ծրագրերի տեղադրման, սպասարկման և ընթացիկ հսկողության հետ կապված աշխատանքները: Որակի կառավարման նպատակով սպասարկվող ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկությունները, սահմանված պարբերականությամբ, ենթակա են վերլուծության՝ ծրագրի նախապատրաստման աշխատանքները համակարգողի կողմից:

Հիմնադրամի շահառուներին տրամադրվող աջակցության նպատակայնության վերաբերյալ հարցերի քննարկման, մոնիթորինգի արդյունքների գնահատման և հիմնադրամի գործունեության հետ կապված այլ հարցերի քննարկման ու համապատասխան որոշումների ընդունման նպատակով հիմնադրամում գործում է կոլեգիալ մարմին՝ Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն՝ կազմված Հիմնադրամի պատասխանատու աշխատողներից:

Հիմնադրամի շահառուների կողմից ԼՂՀ համապատասխան օրենսդրության և ի կատարումն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է վերահսկողության ծառայության կողմից:

Հիմնադրամի ֆինանսական միջոցների շրջանառության նկատմամբ հսկողությունը՝ բոլոր ծրագրերով եկամուտների և ծախսերի /ֆինանսավորումների/ հաշվառումը, ներդված դրամական միջոցների վիճակագրությունը և արդյունավետության վերլուծությունը իրականացնում է հիմնադրամի ֆինանսահաշվային ծառայությունը:

Հիմնադրամի 2010 թվականի պետական աջակցության ծրագրերի անվանացանկն ընդգրկում էր հետևյալ ծրագրերը.

1. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ծրագրեր, այդ թվում՝
    - 1.1 ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր,
    - 1.2 ՓՄՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագիր,
    - 1.3 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր,
    - 1.4 ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության ծրագիր,
    - 1.5 ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագիր,
    - 1.6 ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանն աջակցության ծրագիր,
    - 1.7 ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր,
    - 1.8 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցության ծրագիր:
2. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու կամ վերանորոգելու պետական ֆինանսական աջակցության ծրագիր, այդ թվում՝
    - 2.1 հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում,
    - 2.2 նպատակային փոխառությամբ հիփոթեքային վարկերի կանխավճարների տրամադրում,
    - 2.3 հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում,
    - 2.4 հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ գնում:
3. Փոխառություններ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիներին՝ բնակարան գնելու նպատակով:
4. Հիփոքեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին:
5. Նպատակային ծրագրեր:

## 1.Արցախի ներդրումային հիմնադրամի ամրապնդում ու գործունեության ընդլայնում


Արցախի ներդրումային հիմնադրամի գրասենյակը, ք. Ստեփանակերտ, Տ. Մեծի 25

2010 թվականին Հիմնադրամի կողմից ձեռնարկված քայլերը ուղղված են եղել ԼՂՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման, ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական աջակցության ծրագրերով նախատեսված համապատասխան միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև հիմնադրամի ամրապնդմանը, որի շրջանակում աշխատանքներ են իրականացվել Հիմնադրամի գրասենյակի նյութատեխնիկական հագեցվածության ապահովման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել հիմնադրամի աշխատողների աշխատատեղերը համակարգչային տեխնիկայով, գրասենյակային կահույքով, գրենական պիտույքներով և կապի միջոցներով համալրման, ինչպես նաև աշխատողների մասնագիտական կարողությունների, հմտությունների զարգացման ուղղությամբ:

Նպատակ ունենալով բարձրացնել պետական աջակցության ծրագրերի իրականացման արդյունավետությունը և ապահովել աջակցության նպատակայնությունն ու հասցեականությունը՝ հիմնադրամը շարունակական քայլեր է ձեռնարկում աջակցության ցուցաբերման մեխանիզմների ու ընթացակարգերի կատարելագործման, նոր մեխանիզմների մշակման և գործողության մեջ դնելու ուղղությամբ:

Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգով ԼՂՀ քաղաքացիների համար սահմանված ընդհանուր և վարկավորման պայմանները ընդլայնելու նպատակով՝ 2010 թվականին մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել ԼՂՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 101 որոշմամբ հաստատված բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, որոնք հաստատվել են ԼՂՀ կառավարության 2010 թվականի հունվարի 13-ի թիվ 1-Ն և 2010 թվականի ապրիլի 17-ի թիվ 208-Ն որոշումներով:

ԼՂՀ շրջկենտրոններում հիմնադրամի կողմից կառուցվող բնակարանների և առանձնատների իրացման և շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների համար առավել մատչելի պայմաններ ստեղծելու նպատակով մշակվել և 2010թ. մարտի 12-ին Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 09 որոշմամբ հաստատվել է «ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման» կարգը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել են նաև ՓՄՁ սուբյեկտների պետական աջակցության ծրագրերի իրականացման գործող կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին մի շարք որոշումներ: Ընդհանուր առմամբ 2010 թվականին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդը ընդունել է թվով 32 որոշում, իսկ Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն՝ 306: Հիմնադրամի գործադիր մարմնի կողմից 2010 թվականին ընդունվել են ընթացիկ գործունեությունը կանոնակարգող թվով 18 իրավական ակտեր:

2010 թվականի հունիս ամսին հիմնադրամի ներկայացուցիչը մասնակցել է ՀՀ-ում Իրանից ժամանած գործարարների հետ հանդիպմանը, որի ժամանակ քննարկվել են ՀՀ և ԼՂՀ ներդրումային դաշտին առնչվող հարցեր: 2010թ. նոյեմբերի 23-ին հիմնադրամի ներկայացուցիչները մասնակցել են Զարգացման հայկական գործակալության կողմից կազմակերպված «Օտարերկրյա ներդրումները Հայաստանում» համաժողովին:

2010 թվականին հիմնադրամը համապատասխան աշխատանքներ և միջոցառումներ է իրականացրել ծրագրերի, մասնավորապես՝ հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության, ՓՄՁ

սուբյեկտներին ֆինանսական աջակցության, ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության, ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացքի մասին զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար տեղեկատվության տարածման ուղղությամբ:

Արցախի հանրային հեռուստատեսությամբ շարունակում էր եթեր հեռարձակվել «Արցախի ներդրումային հիմնադրամ» հաղորդաշարը, որի միջոցով հանրությանը իրազեկվում է հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի արդյունքների, ինչպես նաև հետագա անելիքների մասին: Հիմնադրամի գլխավոր տնօրենը տարվա ընթացքում պարբերաբար մամլո ասուլիսներ է անցկացրել լրագրողների հետ՝ հիմնադրամի ընթացիկ գործունեության, արձանագրած ցուցանիշների լուսաբանման նպատակով:

## 2. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ծրագիրը նպատակ ունի նպաստել ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրների հաղթահարմանը և ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովմանը: 2003 թվականից ծրագրերի շրջանակում թվով 700 ՓՄՁ սուբյեկտներ հնարավորություն են ստացել սկսելու կամ ընդլայնելու իրենց սեփական գործը: Այդ նպատակների իրականացման աջակցությանն ուղղված ֆինանսական միջոցների ընդհանուր գումարը կազմում է մոտ 13.72 մլրդ դրամ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 3.8 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը տրամադրվել է «ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման» ենթածրագրի շրջանակում՝ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի միջոցներով:

### 2.1 *ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն*

Սույն ծրագիրը նպատակ ունի ԼՂՀ շրջաններում ընդլայնել ՓՄՁ սուբյեկտների վարկավորման հնարավորությունները: Այդ նպատակով Հիմնադրամը համագործակցում է «Արցախբանկ» և «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների հետ, որոնց միջոցով ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր են տրամադրվում ՓՄՁ սուբյեկտներին:

Սույն ծրագրի շրջանակում 2010 թվականին ֆինանսական աջակցություն է տրամադրվել մեկ շահառուի՝ 3-րդ փուլով խաղողագործության զարգացման ծրագրի իրականացման համար:

Վարկի տեսքով պետական ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտները գործարար ծրագրին համապատասխան ծավալած գործունեության վերջնական ֆինանսական արդյունքների շնորհիվ իրականացնում են վարկի մասնակի և վերջնական մարումներ: 2010 թվականին սույն ծրագրի շրջանակում ՓՄՁ սուբյեկտների պարտավորությունների վերջնական մարումները կազմել են 152.5 մլն դրամ, մասնակի մարումները՝ 228.4 մլն դրամ:

### *2.2 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման աջակցություն*

2010 թվականին շարունակվել է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիրը, որի էությունը կայանում է նրանում, որ Հիմնադրամի հետ համագործակցության պայմանագիր կնքած առևտրային բանկերը իրենց միջոցներով և ռիսկով տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում են վարկեր, իսկ Հիմնադրամը սուբսիդավորում է (անհատույց վճարում է) այդ վարկերի տարեկան տոկոսադրույքների մինչև 10 տոկոսային կետը՝ բարձրացնելով վարկերի մատչելիությունը:


«Իմպուլս» ՍՊԸ

Ծրագրի գործարկման երեք տարվա ընթացքում Հիմնադրամի գործընկեր բանկերի կողմից 281 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 10.9 մլրդ դրամ վարկ: 2008-2010թթ. ըստ եռամսյակների տրամադրված երաշխավորագրերի և վարկերի մասին պատկերացում է տալիս ստորև ներկայացված գծապատկերը:

**Երաշխավորագրերի տրամադրումը և հայտերի ֆինանսավորումը 2008-2010թթ**

Գծապատկեր 1






Հաշվետու ժամանակաշրջանում առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման աջակցություն ստանալու հայտ են ներկայացրել 124 սուբյեկտներ՝ 4.5 մլրդ դրամ վարկային միջոցների պահանջով: Հիմնադրամի ֆինանսական կոմիտեի կողմից հաստատվել են 121 հայտ՝ 4.3 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որոնց բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի բերված է ստորև դիտարկված աղյուսակում.

**2010 թվականին ծրագրի շրջանակում հաստատված հայտերի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի**

Աղյուսակ 1

| Հ/Հ | Տնտեսության ճյուղը | Քանակը /հատ/ | Գումարը /մլն դրամ/ | Աշխատատեղերի քանակը /հատ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Արդյունաբերություն | 43 | 1087,2 | 189 |
| 2 | Գյուղատնտեսություն | 4 | 13,7 | 2 |
| 3 | Շինարարություն | 9 | 1576,3 | 80 |
| 4 | Առևտուր | 25 | 592,5 | 53 |
| 5 | Ծառայություններ | 38 | 959,5 | 175 |
| 6 | Այլ | 2 | 70,0 | 33 |
| | **Ընդամենը** | **121** | **4299,2** | **532** |

Հաստատված ծրագրերի հայտատուներին տրվել են առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման երաշխավորագրեր:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ համագործակցող բանկերում ընթացքավորման մեջ էին գտնվում թվով 25 երաշխավորագրեր, ընդ որում՝ 20-ը՝ «Արցախբանկ», 5-ը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ներում: 2010 թվականի ընթացքում հիմնադրամը տրամադրել է 121 երաշխավորագիր, ընդհանուրը 4.3 մլրդ դրամ գումարով: Տրամադրված երաշխավորագրերից հրաժարվել են 5 սուբյեկտներ՝ 114.0 մլն դրամ ընդհանուր գումարի չափով: Երաշխավորագրեր ստացած 3 սուբյեկտների հայտեր՝ 56.0 մլն դրամ ընդհանուր գումարով, մերժվել են գործակալ բանկերի կողմից: Հիմնադրամի գործակալ բանկերի հետ 103 տնտեսավարող սուբյեկտներ ստորագրել են վարկային պայմանագրեր՝ 1.1 մլրդ դրամ և 7.4 մլն դոլար, ընդամենը՝ 3.8 մլրդ դրամ գումարներով:

### Վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի

Աղյուսակ 2

| Հ/Հ | Գործակալ բանկերը | Ֆինանսավորված հայտերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գումարը | | | |
| | | քանակը | մլն դրամ | հազար ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համարժեք մլն դրամ* | Ընդամենը մլն դրամ |
| 1 | «Արցախբանկ» ՓԲԸ | 78 | 616.7 | 6356.6 | 2326.5 | ***2943.2*** |
| 2 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | 21 | 414.9 | 1000.0 | 366.0 | ***780.9*** |
| 3 | «Ամերիաբանկ» ՓԲԸ | 4 | 53.0 | 45.0 | 16.5 | ***69.5*** |
| | Ընդամենը | ***103*** | ***1084.6*** | ***7401.6*** | ***2709.0*** | ***3793.6*** |

* 1 ԱՄՆ դոլարը = 366,0 ՀՀ դրամ՝ առ 01,01,2011


«Լեռպարդ» ՍՊԸ

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակում առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի բաշխվածքն՝ ըստ սուբյեկտների գործունեության ոլորտների, հետևյալն է. արդյունաբերություն՝ 20.6%, գյուղատնտեսություն՝ 0.5%, շինարարություն՝ 43.9%, առևտուր՝ 11.4%, ծառայությունների մատուցում՝ 23.5%:

Թիվ 3 աղյուսակում դիտարկված է վարկերի տրամադրման դինամիկան 2009-2010թթ.՝ ըստ տնտեսության ճյուղերի:

### Վարկերի տրամադրման դինամիկան ըստ տնտեսության ճյուղերի 2009-2010թթ.

Աղյուսակ 3

| Հ/Հ | Տնտեսության ճյուղը | Ֆինանսավորված հայտերի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | քանակը | | | գումարը /մլն դրամ/ | | |
| | | 2009թ. | 2010թ. | Աճը (-) 2010թ.-ը 2009թ.-ի նկատմամբ %-ով | 2009թ. | 2010թ. | Աճը (-) 2010թ.-ը 2009թ.-ի նկատմամբ %-ով |
| 1 | Արդյունաբերություն | 29 | 38 | **31,0** | 1770,7 | 783,0 | -55,8 |
| 2 | Գյուղատնտեսություն | 28 | 4 | **-85,7** | 321,3 | 18,9 | -94,1 |
| 3 | Շինարարություն | 4 | 8 | **100,0** | 677,4 | 1665,8 | 145,9 |
| 4 | Առևտուր | 8 | 21 | **162,5** | 97,4 | 432,7 | 344,2 |
| 5 | Ծառայություններ | 26 | 32 | **23,1** | 1377,3 | 893,2 | -35,2 |
| | **Ընդամենը** | **95** | **103** | **8,4** | **4244,1** | **3793,5** | **-10,6** |

2010 թվականին տրամադրված վարկերի բաշխվածքն ըստ ԼՂՀ շրջանների, հաշվի առնելով նաև շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքը, ներկայացված է ստորև դիտարկված գծապատկերում:

Գծապատկեր 2




2010 թվականին Հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորման համար ծախսել է 578.2 մլն դրամ, որի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ոլորտների ունի հետևյալ տեսքը.

Գծապատկեր 3



**2010 թվականին  ծրագրի շրջանակում աջակցություն ստացած շահառուների բաշխվածությունն ԼՂՀ շրջաններում՝  ըստ գործունեության  ոլորտների**

/տոկոսներով՝ ընդամենը շրջանի նկատմամբ/

Գծապատկեր 4




**2010 թվականին ծրագրի շրջանակում տրամադրված ֆինանսական աջակցության բաշխվածությունն ԼՂՀ շրջաններում՝ ըստ գործունեության ոլորտների**

/տոկոսներով՝ ընդամենը  շրջանի նկատմամբ/

Գծապատկեր 5


Քաշաթաղի շրջան
Շուշիի շրջան
Հադրութի շրջան
Մարտակերտի շրջան
Մարտունու շրջան
Ասկերանի շրջան
ք.Ստեփանակերտ
0%
20%
40%
60%
80%
100%
Արդյունաբերություն
Գյուղատնտեսություն
Շինարարություն
Առևտուր
Ծառայությունների մատուցում

## 3. ՓՄՁ սուբյեկտների գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Ծրագիրը նպատակ ունի նպաստել ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող հիմնախնդիրների հաղթահարմանը՝ կապված գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարությունների հետ, ինչպես նաև ապահովել ՓՄՁ սուբյեկտների համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման մատչելիությունը, ընդլայնել խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

2010 թվականին սույն ծրագրի շրջանակում Հիմնադրամը իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- մշակվել և հրատարակվել են հիմնադրամի ՓՄՁ աջակցության ծրագրերի իրականացման կարգերի և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող բուկլետներ,
- թողարկվել է «Արցախի գյուղատնտես» տեղեկատվական պարբերականը,
- թողարկվել է «Ներդրողի ուղեցույց» տեղեկատվական գրքույկը, որը նյութեր է պարունակում Արցախի տնտեսական ներուժի, վերջին տարիներին ԼՂՀ-ում գրանցված սոցիալ-տնտեսական ցուցանիշների մասին,
- տպագրվել է Հիմնադրամի իրավական ակտերի 4-րդ տեղեկագիրը՝ նվիրված ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման ծրագրին,
- իրականացվել են «Արդյունաբերությունն Արցախում» 3-րդ տեղեկատվական պարբերականի թողարկման նպատակով անհրաժեշտ նյութերի հավաքագրման աշխատանքները,
- աշխատանքներ են կատարվել Հիմնադրամի ինտերնետային կայքի համար նյութերի հավաքագրման, մշակման ու տեղադրման ուղղությամբ:

## 4. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանն աջակցություն

Արտահանման ծավալների ավելացմանը, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ մրցունակությանը և ՓՄՁ սուբյեկտների հեղինակության բարձրացմանը նպաստելու նպատակով սույն ծրագրի շրջանակում Հիմնադրամը իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանը:



«Պրոդէքսպո 2010», ք.Մոսկվա

2010թ. փետրվարի 8-12-ը ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում կայացավ «ՊՐՈԴԷՔՍՊՈ-2010» սննդամթերքի միջազգային ցուցահանդեսը, որում ԼՂՀ-ն ներկայացրեց «Արցախ Ֆրութ» ՓԲԸ-ն: Ցուցահանդեսին մասնակցեցին Արցախի ներդրումային հիմնադրամի գլխավոր տնօրեն Կարեն Եսայանը և «Արցախ Ֆրութ» ՓԲԸ գործադիր տնօրեն Գագիկ Ներսեսյանը:

Հիմնադրամի կողմից լրիվությամբ հատուցվեցին ցուցահանդեսին մասնակցության անդամավճարը, ցուցադրական տարածքի վարձակալության, ինֆորմացիոն կատալոգում գովազդային ինֆորմացիայի տեղադրման վճարները:


BRIDGE 2010, Ծաղկաձոր

2010թ. փետրվարի 19-22-ը ՀՀ ք. Ծաղկաձորում կայացավ «BRIDGE 2010» տնտեսական համաժողովը, որի աշխատանքներին ԼՂՀ-ից մասնակցեցին 10 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ՝ «Ոսկե հասկ» ՍՊԸ, «Նոր Անի» ՍՊԸ, «Բլարգ» ՍՊԸ, «ԳՆԱՏ» ՍՊԸ, «Շին-Վեր Պլյուս» ՍՊԸ, «Արցախփոստ» ՓԲԸ, «Ատրիում» ՍՊԸ, «Բերդ» ՍՊԸ, «Ավտոդիզել» ՍՊԸ և ԱՁ Նարինե Լալայանը, որոնք Հիմնադրամի կողմից ստացան համապատասխան ֆինանսական աջակցություն՝ գրանցման վճարի մասով:



Caucasus Building and Reconstruction EXPO 2010, ք.Երևան

Ցուցահանդեսին մասնակցեցին նաև ԼՂՀ քաղաքաշինության նախարար Անահիտ Վարդանյանը, ԼՂՀ ԿԱ ԿՇՎ պետ Կարեն Շահրամանյանը, ԼՂՀ Գյուղի և Գյուղատնտեսության Զարգացման Հիմնադրամի տնօրեն Հայկ Ջավադյանը և Արցախի ներդրումային հիմնադրամի ներկայացուցիչը:

2010թ. ապրիլի 2-4-ը ՀՀ Երևան քաղաքի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ Caucasus Building and Reconstruction EXPO 2010 7-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսը, որին մասնակցեցին ԼՂՀ երկու տնտեսավարող սուբյեկտներ՝ «Կարին» ՓԲԸ-ն և «Սասուն» ՓԲԸ-ն՝ միասնական տաղավարով:

Հիմնադրամի կողմից լրիվությամբ հատուցվեցին ցուցահանդեսին մասնակցության համար անհրաժեշտ անդամավճարը, ցուցադրական տարածքի վարձակալության վճարը:

Սույն թվականի հունիսի 25-28-ը քաղաք Ստեփանակերտում անցկացվեց BRIDGE ARTSAKH 2010 տնտեսական համաժողովը և դրա շրջանակում` «Artsakh Expo 2010» առևտրաարդյունաբերական ցուցահանդեսը: Սույն ծրագրի միջոցների հաշվին ապահովվեց ԼՂՀ պետական կառավարման շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը, համաժողովի վերաբերյալ տեղեկատվության տարածումը, մասնակիցների հայտերի ընդունումը և այլ անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքների կատարումը:


BRIDGE ARTSAKH, ք.Ստեփանակերտ

Համաժողովին ԼՂՀ-ից մասնակցեցին շուրջ 75 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ, իսկ արտադրաարդյունաբերական ցուցահանդեսին` 8 ՓՄՁ սուբյեկտ:


ARMENIA EXPO 2010, ք. Երևան

2010թ. սեպտեմբերի 3-5-ը Երևան քաղաքի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ ARMENIA EXPO 2010 10-րդ տարածաշրջանային ունիվերսալ առևտրա-արդյունաբերական ցուցահանդեսային փորումը, որին մասնակցեցին ԼՂՀ հինգ ՓՄՁ սուբյեկտներ` «Արցախ Ֆրուք» ՓԲԸ-ն, «Սասուն» ՓԲԸ-ն, «Կարին» ՓԲԸ-ն, «Իմպուլս» ՍՊԸ-ն և ԱՁ Մելսոն Սարգսյանը:

Սույն ծրագրի շրջանակում Հիմնադրամի գլխավոր տնօրեն Արտակ Միրզոյանը, ԱԺ Պետաիրավական հանձնաժողովի նախագահ Գագիկ Պետրոսյանը և Ռոբերտ Ղահրամանյանը մասնակցեցին սույն թվականի սեպտեմբերի 21-24-ը Ուկրաինայի Դաշնության Կիեվ քաղաքում տեղի ունեցած «ՊՐԻՄՈՒՍ 2010» փայտամշակման ժամանակակից տեխնոլոգիաների ցուցահանդեսին և սեպտեմբերի 27-30-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «Լեսդրեվմաշ 2010» փայտամշակման համար անհրաժեշտ պարագաների ցուցահանդեսին:

2010թ. հոկտեմբեր ամսում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարությունների միջև 2010-2012թթ. ոլորտային համագործակցության միջոցառումների ծրագրի շրջանակներում «ՏՀՏ լիդերների հանդիպում» փորումի կազմակերպմանն օժանդակելու նպատակով հիմնադրամի կողմից տրամադրվեց մոտ մեկ միլիոն դրամի ֆինանսական աջակցություն:

2010թ. նոյեմբեր ամսում կազմակերպչական աշխատանքներ տարվեցին «ՄԱՍՏԵՐ» Միջազգային Ինտեգրման Աջակցության Կենտրոնի կողմից թողարկվող ECONOMIC BRIDGE 2010-2011 ամենամյա կատալոգում Հիմնադրամի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տեղադրման համար:

2010թ. նոյեմբերի 23-28-ը Սիրիայի Հալեպ քաղաքում կայացած համահայկական բազմապրոֆիլ ցուցահանդեսին մասնակցության նպատակով հիմնադրամի կողմից ֆինանսական և կազմակերպչական աջակցություն տրամադրվեց երեք ՓՄՁ սուբյեկտների` «Արցախ Ֆրուք» ՓԲԸ, «Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ և ԱՁ Մելսոն Սարգսյան: Ցուցահանդեսին արցախյան արտադրատեսակները ներկայացվեցին միասնական ստենդով:

## 5. ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն

Սույն ծրագրի նպատակն է ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն ցուցաբերելով՝ նպաստել գիտատեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանը, տեղական արտադրանքի մրցունակության բարձրացմանը և ՓՄՁ սուբյեկտների արտահանման ներուժի ընդլայնմանը:

ՓՄՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցության ծրագրի շրջանակում մոտ 5.0 մլն դրամի չափով ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոն» նախագծի իրագործման՝ մասնավորապես, ժամանակակից համակարգչային տեխնիկայով համալրման հարցում: Նախագծի իրագործումը նպաստում է ԼՂՀ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը, տարբեր ոլորտներում բլոգների /կայքերի/ զարգացման պայմանների ստեղծմանը:

Սույն ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ԼՂՀ-ում Տելեբժշկության պիլոտային ծրագրի իրականացման գործում, որի նպատակն է տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ, առցանց կազմակերպել ԼՂՀ վատառողջ քաղաքացիների հետազոտություն Երևանում գործող բժիշկների կողմից:

## 6. Հիփոթեքային վարկավորմամբ բնակարան /առանձնատուն/ ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցություն

ԼՂՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման և ԼՂՀ-ում բնակարանաշինարարության զարգացման նպատակով Հիմնադրամը 2008 թվականից իրականացնում է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման ծրագիրը, որի էությունը կայանում է նրանում, որ Հիմնադրամի հետ համագործակցող բանկերը սույն ծրագրի ընդհանուր պայմաններին բավարարող քաղաքացիներին տրամադրում են հիփոթեքային վարկեր բնակարան գնելու, վերանորոգելու կամ կառուցելու համար, իսկ Հիմնադրամը ցուցաբերում է աջակցություն հետևյալ ձևերով.

ա. հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում,

բ. նպատակային փոխառությամբ կանխավճարների տրամադրում,

գ. հիփոթեքային վարկավորմամբ իրացման նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում,

դ. իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ գնում:

### *6.1 Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում*

2010 թվականին Հիմնադրամը շարունակել է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ծրագրի իրականացումը, մասնավորապես հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ուղղությամբ, որի դեպքում Հիմնադրամի կողմից սուբսիդավորվել է (անհատույց վճարվել է) հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մինչև 6 տոկոսային կետը, ինչի շնորհիվ ապահովվել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի մատչելիությունը ԼՂՀ քաղաքացիների համար:

Կատարվել են ծրագրի իրականացման մեխանիզմների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել գործող կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, որոնք հաստատվել են ԼՂՀ կառավարության 2010 թվականի

հունվարի 13-ի թիվ 1-Ն և 2010 թվականի ապրիլի 17-ի թիվ 208-Ն որոշումներով: ԼՂՀ քաղաքացիների համար ընդլայնվել են ծրագրից օգտվելու հնարավորությունները:

2010 թվականի ընթացքում Հիմնադրամ է դիմել ընդամենը 433 քաղաքացի, որոնցից 115-ը՝ բնակարանի գնման, 45-ը՝ բնակելի տան կառուցման, 273-ը՝ բնակարանի վերանորոգման համար: Ընդ որում՝ բնակարանի գնման համար դիմած քաղաքացիներից 99-ը ցանկացել են բնակարան ձեռք բերել առաջին գոտում (ք. Ստեփանակերտում), 16-ը՝ երկրորդ գոտում (ԼՂՀ շրջաններում), բնակելի տան կառուցման համար դիմած քաղաքացիներից 38-ը՝ առաջին գոտում, 7-ը՝ երկրորդ, բնակարանի վերանորոգման համար դիմած քաղաքացիներից 209-ը՝ առաջին գոտում, 64-ը՝ երկրորդ գոտում:







Հաշվետու ժամանակաշրջանում հիփոթեքային վարկավորման աջակցության ծրագրից օգտվելու նպատակով դիմած քաղաքացիների՝ ըստ շրջանների բաշխվածությունը ներկայացված է ստորև:

**Ծրագրից օգտվելու նպատակով հիմնադրամ դիմած քաղաքացիների բաշխվածությունն՝ ըստ շրջանների**

Աղյուսակ 4

| Շրջանը | Քաղաքացիների թիվը | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | այդ թվում | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բնակարանի գնում | բնակելի տան կառուցում | բնակարանի վերանորոգում |
| ք.Ստեփանակերտ | 346 | 79,91 | 29,19 | 10,69 | 60,12 |
| Ասկերանի շրջան | 18 | 4,16 | 22,22 | 27,78 | 50,00 |
| Մարտունու շրջան | 13 | 3,00 | 7,69 | 0,00 | 92,31 |
| Մարտակերտի շրջան | 13 | 3,00 | 23,08 | 23,08 | 53,85 |
| Շուշիի շրջան | 18 | 4,16 | 22,22 | 0,00 | 77,78 |
| Հադրութի շրջան | 24 | 5,54 | 8,33 | 0,00 | 91,67 |
| Քաշաթաղի շրջան | 1 | 0,23 | 0,00 | 0,00 | 0,00 |
| **Ընդամենը** | **433** | **100** | | | |

Ընդհանուր 433 տեղեկանքներից 367-ը՝ ծրագրի փորձագետների կողմից նախնական դրական եզրակացության են արժանացել, 66-ը՝ չեն բավարարել կարգի պայմաններին: Այսինքն, Հիմնադրամ դիմած քաղաքացիների 84.8%-ի պայմանները համապատասխանում են պետական աջակցության տրամադրման կարգով սահմանված ընդհանուր պայմաններին:







2010 թվականի ընթացքում հիմնադրամի ֆինանսական կոմիտեի կողմից բավարարվել է հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման աջակցություն ստանալու համար ներկայացված 375 հայտ, այդ թվում՝ 98 բնակարանի գնման, 241-ը՝ վերանորոգման, 36-ը՝ կառուցման նպատակներով:

Ֆինանսական կոմիտեի համապատասխան որոշումների հիման վրա դրական եզրակացություն ստացած քաղաքացիներին տրամադրվել են պետության ֆինանսական աջակցությունը հավաստող երաշխավորագրեր: Ընդհանուր առմամբ 2010 թվականին հիմնադրամի կողմից տրվել է ընդհանուրը 2.6 մլրդ դրամ գումարի թվով 375 երաշխավորագրեր, որը 23.4 %-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիներին՝ ըստ աջակցության ուղղությունների, տրամադրված երաշխավորագրերի բաշխվածության մասին պատկերացում է տալիս թիվ 11 գծապատկերը:

**2010 թվականին տրամադրված երաշխավորագրերի բաշխվածքը ըստ ԼՂՀ շրջանների**

Գծապատկեր 6



2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործակալ բանկերում ընթացքավորման փուլում էին գտնվում 78 հայտեր, որոնցից 48-ը Արցախբանկում, 29-ը՝ Հայբիզնեսբանկում, 1-ը՝ Ամերիաբանկում:

2010թ. գործակալ բանկերի հետ վարկային պայմանագրեր են կնքել 376 քաղաքացիներ, որոնցից 92-ը բնակարանի գնման, 243-ը՝ վերանորոգման, 41-ը՝ բնակելի տան կառուցման նպատակով՝ 2.3 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

2010թ. գործակալ բանկերի կողմից մերժվել է 12 հայտ: Բանկերում ընթացքավորման փուլում տարբեր պատճառներով հայտից հրաժարվել են 20 քաղաքացիներ:

Բանկերի կողմից հայտերի մերժման հիմնական պատճառներն են.

- քաղաքացիների եկամուտների ցածր մակարդակը,
- որոշ քաղաքացիների վարկային բացասական պատմությունը:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ 44 հայտ գտնվում են գործակալ բանկերում՝ ընթացքավորման փուլում:

**Ծրագրի շրջանակում երաշխավորագրերի և վարկերի տրամադրման դինամիկան 2008-2010թթ**

Գծապատկեր 7



## 2010թ. վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի

Աղյուսակ 5

| Հ/հ | Գործակալ բանկերը | Ֆինանսավորված հայտերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | քանակը | գումարը | | | |
| | | | մլն դրամ | հազար ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համարժեք մլն դրամ* | Ընդամենը մլն դրամ |
| 1 | «Արցախբանկ» ՓԲԸ | 230 | 973.7 | 1560.7 | 571.2 | 1544.9 |
| 2 | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | 123 | 646.2 | 0 | 0 | 646.2 |
| 3 | «Ամերիաբանկ» ՓԲԸ | 1 | 4.0 | 0 | 0 | 4.0 |
| 4 | «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ | 22 | 99.4 | 0 | 0 | 99.4 |
| | Ընդամենը | 376 | 1723.3 | 1560.7 | 571.2 | 2294.5 |

* 1 ԱՄՆ դոլարը = 366,0 ՀՀ դրամ՝ առ 01,01,2011

## 2010թ. վարկերի տրամադրումն ըստ ուղղությունների

Գծապատկեր 8



## 2010թ. վարկերի տրամադրումն ըստ ԼՂՀ շրջանների

Աղյուսակ 6

| Ընդամենը | 376 /վարկ/ | 100% | այդ թվում /%-ով/ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բնակարանի գնում | բնակելի տան կառուցում | բնակարանի վերանորոգում |
| ք.Ստեփանակերտ | 298 | 79,26 | 27,2 | 13,1 | 59,7 |
| Ասկերանի շրջան | 9 | 2,39 | 33,3 | 11,1 | 55,6 |
| Մարտունու շրջան | 11 | 2,93 | 0,0 | 0,0 | 100,0 |
| Մարտակերտի շրջան | 14 | 3,72 | 21,4 | 7,1 | 71,4 |
| Շուշիի շրջան | 24 | 6,38 | 20,8 | 0,0 | 79,2 |
| Հադրութի շրջան | 20 | 5,32 | 0,0 | 0,0 | 100,0 |


մինչև վերանորոգումը


վերանորոգումից հետո

2008-2010 թվականներին ծրագրի իրականացման համեմատական ցուցանիշները ներկայացված են թիվ 1 հավելվածում:

Ընդհանուր առմամբ 2008-2010 թվականներին սույն ենթածրագրի շրջանակում ըստ ուղղությունների աջակցություն ստացած քաղաքացիների թվաքանակի մասին պատկերացում է տալիս ստորև դիտարկված աղյուսակը.

### Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
### ֆինանսական աջակցությունից օգտված շահառուների մասին առ 01.01.11

Աղյուսակ 7

| Վարկի նպատակը | Ֆինանսավորված վարկերի քանակը | Ֆինանսական աջակցությունից օգտված շահառուների քանակը |
|---|---|---|
| Բնակարանի գնում | 175 | 556 |
| Բնակարանի վերանորոգում | 538 | 1887 |
| Բնակարանի կառուցում | 82 | 296 |
| **Ընդամենը** | **795** | **2739** |

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակում ԼՂՀ քաղաքացիներին տրամադրված հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորմանն ուղղված գումարները կազմել են 167.4 մլն դրամ: Բաշխվածքն ըստ աջակցության ուղղությունների և բնակության վայրերի դիտարկված է ստորև ներկայացված աղյուսակում:

**2010 թվականին ԼՂՀ քաղաքացիներին տրամադրված ֆինանսական աջակցությունն (սուբսիդավորման գումարները)՝ ըստ շրջանների և ուղղությունների**

Աղյուսակ 8

| ՀՀ | Շրջանը | Աջակցության ուղղությունը | Աջակցության /սուբսիդիայի/ գումարը /մլն դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | ք.Ստեփանակերտ | բնակարանի գնում | 74,14 |
| | | բնակելի տան կառուցում | 29,57 |
| | | բնակարանի վերանորոգում | 46,03 |
| 2 | Ասկերանի շրջան | բնակարանի գնում | 0,99 |
| | | բնակելի տան կառուցում | 1,11 |
| | | բնակարանի վերանորոգում | 3,02 |
| 3 | Մարտունու շրջան | բնակարանի գնում | 0,85 |
| | | բնակելի տան կառուցում | 0,45 |
| | | բնակարանի վերանորոգում | 3,69 |
| 4 | Մարտակերտի շրջան | բնակարանի գնում | 0,23 |
| | | բնակելի տան կառուցում | 0,53 |
| | | բնակարանի վերանորոգում | 1,37 |
| 5 | Շուշիի շրջան | բնակարանի գնում | 1,45 |
| | | բնակելի տան կառուցում | 0,00 |
| | | բնակարանի վերանորոգում | 2,63 |
| 6 | Հադրութի շրջան | բնակարանի գնում | 0,00 |
| | | բնակելի տան կառուցում | 0,17 |
| | | բնակարանի վերանորոգում | 1,15 |
| | **Ընդամենը** | | **167,38** |

### *6.2 Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում*

Սույն ենթածրագիրը ենթադրում է քաղաքացիների որոշ նպատակային խմբերի կողմից, ինչպես նաև առաջնային շուկայից բնակարան ձեռք բերելու դեպքերում՝ հիփոթեքային վարկերի ստացման համար անհրաժեշտ կանխավճարի մասնակի տրամադրմամբ, պետական ֆինանսական աջակցության ցուցաբերում:

2008-2010 թվականին առաջնային շուկայից բնակարան գնելու նպատակով թվով 22 քաղաքացու տրամադրվել է նպատակային անտոկոս փոխառություն ստանալու երաշխավորագիր ընդհանուրը 41.01 մլն դրամ գումարի չափով, ընդ որում՝ 2010թ. տրամադրվել է 18 երաշխավորագիր՝ 32.7 մլն դրամի չափով: 2010թ. տրամադրված երաշխավորագրերի հիման վրա ֆինանսավորվել են 12 քաղաքացի՝ ընդհանուրը 24.14 մլն դրամի չափով, ընդ որում մեկ քաղաքացի հետ է վերադարձրել փոխառության գումարը և հրաժարվել վարկից: Երկու քաղաքացի հրաժարվել են վարկից և նպատակային անտոկոս փոխառություն ստանալուց, որի ընդհանուր գումարը կազմել է 3.87 մլն դրամ:

### *6.3 Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում և գնում*

ԼՂՀ-ում բնակարանաշինարարությունը խթանելու նպատակով Հիմնադրամը սույն ծրագրի շրջանակում 2008 թվականից միջոցներ է ներդնում բնակարանաշինարարության ոլորտում, հատկապես ԼՂՀ շրջկենտրոններում նոր շենքեր և առանձնատներ կառուցելու գործում:


ք. Ասկերան, Ն. Ստեփանյան 10դ1, 10դ2

2010թ. ավարտվել են Ասկերան քաղաքում երկու ինը բնակարանոց շենքերի կառուցման աշխատանքները և հանձնվել են սեպտեմբեր ամսին: Ավարտման փուլում են գտնվում Մարտունու քաղաքում 7 առանձնատների կառուցման աշխատանքները: Տարվա ընթացքում շարունակվել են Շուշի քաղաքի Նիկոլ Դումանի փողոցում գտնվող թիվ 2՝ 64 բնակարանոց շենքի կապիտալ վերանորոգման, Մարտակերտ քաղաքում մեկ 18 բնակարանոց, Հադրութ քաղաքում մեկ 9 բնակարանոց, Ստեփանակերտ քաղաքում նախկին կահույքի ֆաբրիկայի տարածքում 45 բնակարանոց բնակելի շենքերի կառուցման աշխատանքները:

Ընթացիկ տարում պատվիրվել են Շուշի քաղաքում Արամ Մանուկյան փողոցում գտնվող 42 բնակարանոց բնակելի շենքի կապիտալ վերանորոգման, Ասկերան քաղաքում երեք 12 բնակարանոց շենքերի, Մարտակերտ քաղաքում 12 բնակարանոց շենքի և 20 առանձնատների կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

2010թ. Հիմնադրամը առուվաճառքի նախնական պայմանագիր է կնքել «Կամուրջ» ՍՊԸ-ի հետ Կամո փողոցի 2-րդ նրբանցք թիվ 2 (նախկին կահույքի ֆաբրիկայի տարածքում) կառուցվող շենքից ընդհանուրը 1652.0 քառ. մետր մակերեսով թվով 20 բնակարան ձեռք բերելու նպատակով, որոնք նախատեսվում է հանձնել 2011 թվականի օգոստոսի 10-ին:

Հիմնադրամի կողմից 2008-2010 թվականներին վերոնշյալ բնակելի շենքերի կառուցման ու վերանորոգման աշխատանքների իրականացման և ըստ շինարարության օբյեկտների փաստացի կատարված ծախսումների մասին տեղեկությունները ներկայացված են հավելված 2-ում:

Ծրագրի շրջանակում ներդրված 2.3 մլրդ դրամ գումարից բնակարանների շինարարության համար ներդրումը կազմում է 1.8 մլրդ դրամ, որից 755.8 մլն դրամը կատարված է 2010 թվականին:

## 7. ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցություն

ԼՂՀ շրջկենտրոններում հիմնադրամի կողմից կառուցվող բնակարանների և առանձնատների իրացման և շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների համար առավել մատչելի պայմաններ ստեղծելու նպատակով Հիմնադրամի կողմից մշակվել և 2010թ. մարտի 12-ին Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 09 որոշմամբ հաստատվել է «ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման» կարգը, որի համաձայն քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվում ԼՂՀ շրջկենտրոններում ձեռք բերել բնակարան վճարելով 5% նախավճար, ստանալ փոխառություն տարեկան 1% տոկոսադրույքով մինչև 18 տարի մարման ժամկետով: Հիմնադրամի կողմից մշակվել է ծրագրի իրականացման ընթացակարգը, սեպտեմբեր ամսից սկսվել է ծրագրի իրականացման գործընթացը:

2010թ. ընթացքում սույն ծրագրից օգտվելու նպատակով Հիմնադրամ են դիմել 98 քաղաքացի, որոնցից 65-ը Շուշի քաղաքում բնակարան գնելու նպատակով, 33 քաղաքացի՝ Ասկերան քաղաքում: Ընդհանուր 98 տեղեկանքներից 52-ը ծրագրի փորձագետների կողմից նախնական դրական եզրակացության են արժանացել, 46-ը՝ չեն բավարարել կարգի պայմաններին:

2010թ. քաղաքացիների կողմից Հիմնադրամ են ներկայացվել բնակարանի գնման 36 հայտ, որոնցից 29-ը՝ Շուշի քաղաքում, իսկ 7-ը՝ Ասկերան քաղաքում բնակարանի գնման: Փոխառության և առուվաճառքի պայմանագրեր են կնքվել 10 քաղաքացու հետ՝ 9-ը Շուշի քաղաքում բնակարան գնելու, 1-ը՝ Ասկերան քաղաքում բնակարան գնելու նպատակով: Վերոնշյալ 10 բնակարանների առուվաճառքի գծով մուտքագրված նախավճարի չափը կազմել է 9.5 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների արդյունքները ներկայացված են ստորև դիտարկված աղյուսակում.

Աղյուսակ 9

| Հ/Հ | Շրջկենտրոնը | Լրացված տեղեկանքների քանակը /հատ/ | Ընդունված հայտերի քանակը /հատ/ | Հաստատված հայտերի | | Հրաժարված հայտերի | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | քանակը /հատ/ | գումարը /մլն դրամ/ | քանակը /հատ/ | գումարը /մլն դրամ/ |
| 1 | ք.Շուշի | 65 | 29 | 11 | 93,0 | | |
| 2 | ք.Ասկերան | 33 | 7 | 2 | 27,3 | 1 | 13,4 |
| ***Ընդամենը*** | | ***98*** | ***36*** | ***13*** | ***120,3*** | ***1*** | ***13,4*** |

## 8. Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին

ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագիրը գործում է 2009 թվականի ապրիլ ամսից Մարտակերտի և Ասկերանի շրջանի գյուղական համայնքներում, որի նպատակն է արտոնյալ պայմաններով փոխառություններ տրամադրել գյուղաբնակ քաղաքացիներին բնակարան գնելու, վերանորոգելու կամ կառուցելու նպատակով: 2010թ. փետրվարի 1-ից ծրագրի իրականացման գործընթացում ընդգրկվել են նաև Մարտունու, Շուշիի և Հադրութի շրջանների գյուղաբնակ քաղաքացիները:


Հադրութի շրջան, գ. Ազոխ, մինչև վերանորոգումը


վերանորոգումից հետո

Արտոնյալ պայմաններով նպատակային փոխառությունների տրամադրմամբ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 117 ընտանիքի, ընդամենը 184.33 մլն դրամ գումարի չափով, ինչը 39 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդհանուր առմամբ, ծրագրի մեկնարկից երկու տարվա ընթացքում ֆինանսական աջակցություն են ստացել 219 ընտանիք՝ 316.6 մլն դրամ գումարի չափով:


Ասկերանի շրջան, գ. Բերքաձոր, մինչև վերանորոգումը


վերանորոգումից հետո

Ծրագրի շրջանակում իրականացված  աշխատանքների արդյունքները ներկայացված են ստորև դիտարկված աղյուսակում.

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ԼՂՀ գյուղաբնակ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման պետական ֆինանսական աջակցության ծրագրի գործունեության մասին

Աղյուսակ 10

| Հ/Հ | Շրջանը | Դիմումների թիվը | Ընդունված հայտերի քանակը | Մերժված և հետ. հայտերի քանակը | Հաստատված հայտերի | | Ֆինանսավորված հայտերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակը | գումարը /հազ. դրամ/ | I փուլ | | II փուլ | | Ընդամենը |
| | | | | | | | քանակը | գումարը /հազ. դրամ/ | քանակը | գումարը /հազ. դրամ/ | |
| 1 | **Ընդամենը, այդ թվում՝** | **242** | **136** | **2** | **110** | **174860.0** | **117** | **164410.0** | **114** | **67920.0** | **1843** |
| *1.1* | ***Ասկերան*** | ***64*** | ***42*** | ***0*** | ***30*** | ***47300.0*** | ***39*** | ***39400.0*** | ***44*** | ***25120.0*** | ***6452*** |
| | գնում | 3 | 1 | | 1 | 3000.0 | 1 | 3000.0 | | | 300 |
| | վերանորոգում | 61 | 41 | | 29 | 44300.0 | 38 | 36400.0 | 44 | 25120.0 | 6152 |
| *1.2* | ***Մարտակերտ*** | ***26*** | ***16*** | ***1*** | ***13*** | ***21190.0*** | ***13*** | ***15090.0*** | ***21*** | ***11700.0*** | ***267*** |
| | գնում | 4 | 2 | | 2 | 3690.0 | 2 | 3690.0 | | | 369 |
| | վերանորոգում | 22 | 14 | 1 | 11 | 17500.0 | 11 | 11400.0 | 21 | 11700.0 | 231 |
| *1.3* | ***Մարտունի*** | ***103*** | ***58*** | ***1*** | ***49*** | ***78170.0*** | ***47*** | ***44970.0*** | ***38*** | ***23000.0*** | ***679*** |
| | գնում | 4 | 2 | | 2 | 4170.0 | 1 | 1170.0 | | | 117 |
| | վերանորոգում | 99 | 56 | 1 | 47 | 74000.0 | 46 | 43800.0 | 38 | 23000.0 | 668 |
| *1.4* | ***Հադրութ*** | ***36*** | ***16*** | ***0*** | ***14*** | ***23600.0*** | ***14*** | ***14200.0*** | ***10*** | ***6700.0*** | ***209*** |
| | գնում | 2 | | | | | | | | | |
| | վերանորոգում | 34 | 16 | | 14 | 23600.0 | 14 | 14200.0 | 10 | 6700.0 | 209 |
| *1.5* | ***Շուշի*** | ***13*** | ***4*** | ***0*** | ***4*** | ***4600.0*** | ***4*** | ***2750.0*** | ***2*** | ***1400.0*** | ***415*** |
| | գնում | | | | | | | | | | |
| | վերանորոգում | 13 | 4 | | 4 | 4600.0 | 4 | 2750.0 | 2 | 1400.0 | 415 |

Տրամադրված փոխառություններից մուտքագրված տոկոսը կազմում է 6.0 մլն դրամ, փոխառությունների մասնակի մարումների ընդհանուր գումարը՝ 59.3 մլն դրամ:

Ծրագիրը 2011 թվականին կընդգրկի նաև ԼՂՀ մյուս շրջանների՝ Քաշաթաղի և Շահումյանի գյուղական համայնքները:

# 9. Նպատակային ծրագրեր

***Փոխառությունների տրամադրում:*** ԼՂՀ-ում ձեռնարկատիրության զարգացումը խթանելու նպատակով ձեռնարկատիրության պետական ֆինանսական աջակցության տարեցտարի ընդլայնվող ծրագրերի անվանացանկում ընդգրկված նպատակային ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում 89 սուբյեկտների հետ ստորագրվել են նպատակային փոխառության պայմանագրեր՝ 1.0 մլրդ դրամ գումարի չափով:

***Տնտեսական ընկերությունների ստեղծում կամ դրանցում մասնակցություն:*** 2010 թվականին իր առաջին գործարքներն է իրականացրել նաև «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2009 թվականին Հիմնադրամի կողմից: Մասնավորապես, «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքվել են վարկային պայմանագրից ծագած իրավունքները (պահանջը) փոխանցելու (զիջելու) թվով 21 պայմանագրեր՝ ընդհանուր 36.4 մլն դրամի չափով: Ընկերության սեփական միջոցների հաշվին իրականացվել են թվով 22 քաղաքացու ֆինանսավորում՝ ընդամենը 99.4 մլն դրամի չափով:

2010թ. Հիմնադրամը ներդրումներ է կատարել նաև «Արցախ Ֆրուտ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում՝ 700.0 մլն դրամի չափով: 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ գրանցվել էին 650.0 մլն դրամի չափով ներդրումներ, կանոնադրական կապիտալը կազմում էր 1.12 մլրդ դրամ, Արցախի ներդրումային հիմնադրամի մասնաբաժինը՝ 79.4%:

Հաշվետու տարում Հիմնադրամը ներքոհիշյալ առևտրային ընկերություններից բաժնետոմսերի ձեռքբերմանն է ուղղել 78.0 մլն դրամ.

- «Արցախ Ֆրուտ» ՓԲԸ՝ 4.7 մլն դրամ,
- «ՊՐՈՖՄԵՏ» ՍՊԸ՝ 73.3 մլն դրամ:

***ԼՂՀ տրանսպորտային պարկի վերազինման աջակցություն:*** 2010թ. ԼՂՀ տրանսպորտային պարկի վերազինման աջակցության համար նախատեսված միջոցներով «Պրոմագրոսերվիս» ՓԲԸ-ից ձեռք են բերվել ՆԵՄԱՆ-3232-020 մակնիշի թվով 10 բելոռուսական մարդատար ավտոբուս 159.9 մլն դրամ ընդհանուր արժեքով:

## 10. Մոնիթորինգ

Հիմնադրամը դիտարկումների միջոցով վերահսկողություն է իրականացնում շահառուներին տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ: Պարբերաբար իրականացվող դիտարկումները հնարավորություն են տալիս գործնականում ուսումնասիրել նաև ծրագրերի որակական ցուցանիշները, երևան հանել դրանց արդյունավետ իրականացմանը խոչընդոտող գործոնները, որոնց հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկմամբ պարբերաբար կատարելագործվում են հիմնադրամի աջակցության ծրագրերը:

Ըստ ֆինանսավորված գործարար ծրագրերի ստուգման ժամանակացույցի՝ փաստացի դիտարկման միջոցով տարվա ընթացքում նախատեսված էր իրականացնել 184 գործարար ծրագրերի մոնիթորինգ: Նախատեսված 184 ծրագրերից 2010 թվականին փաստացի իրականացվել է 140 շահառուների կողմից ներկայացրած 141 գործարար ծրագրերի մոնիթորինգ, որոնց բաշխվածքն ըստ ոլորտների և ԼՂՀ շրջանների ներկայացված է թիվ 11 աղյուսակում:

Իրականացրած 141 գործարար ծրագրերի մոնիթորինգի արդյունքներով արձանագրվել է 107 գործարար ծրագրերով ստացած վարկերի նպատակային օգտագործման փաստ, 28 տնտեսավարող սուբյեկտներ ստացել են գրավոր նախազգուշացում՝ գործարար ծրագրով նախատեսված պարտավորությունները թերի կատարելու համար և 5 տնտեսվարող սուբյեկտների մոտ պարզվել է վարկի ոչ նպատակային օգտագործման փաստ:

**Տեղեկություններ**
**դիտարկման ենթարկված գործարար ծրագրերի՝ ըստ գործունեության ոլորտների և ԼՂՀ շրջանների բաշխվածության մասին**

Աղյուսակ 11

| Հ/Հ | Վայրը / Ոլորտը | ք.Ստեփանա-կերտ | Ասկերանի շրջան | Մարտունու շրջան | Մար-տակերտի շրջան | Հադրութի շրջան | Քաշաթաղի շրջան | Շահումյանի շրջան | Շուշիի շրջան | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Առևտուր | 11 | 1 | 2 | | | | | | **14** |
| 2 | Ծառայություն | 25 | 3 | 5 | 2 | 1 | | | 2 | **38** |
| 3 | Արտադրություն | 21 | 3 | 8 | 2 | 2 | | 1 | 1 | **38** |
| 4 | Խաղողագործություն, պտղաբուծություն | | 7 | 8 | 3 | 4 | 1 | | | **23** |
| 5 | Անասնապահություն | | 4 | 3 | 4 | 4 | | 1 | 4 | **20** |
| 6 | Ձկնաբուծություն | *1* | *1* | | | | | | | ***2*** |
| 7 | Մեղվաբուծություն | | *1* | | | | *1* | | | ***2*** |
| 8 | Այլ | *2* | *1* | | *1* | | | | | ***4*** |
| | ***Ընդամենը*** | ***60*** | ***21*** | ***26*** | ***12*** | ***11*** | ***2*** | ***2*** | ***7*** | ***141*** |

Հիփոթեքային ծրագրերի շրջանակում 2010 թվականին նախատեսված 244 հիփոթեքային ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի աշխատանքների կատարման փոխարեն վերահսկողության ծառայության կողմից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է նաև բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական աջակցության ծրագրի շահառուների բնակարանների վերանորոգման և կառուցման 249 նախնական, 252 ընթացիկ ստուգման աշխատանքներ:

## 11. Հիմնադրամի գործունեության ֆինանսական ցուցանիշները

Հիմնադրամի սեփական կապիտալը 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 4.7 մլրդ դրամ:

2010 թվականին Հիմնադրամին ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեից՝ որպես աջակցություն հատկացվել էր 1.8 մլրդ դրամ:

Հիմնադրամի հաշվետու տարվա գործունեության արդյունքում ստացված եկամուտը կազմում է 180.9 մլն դրամ, որը 8.9%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում՝ հիփոթեքային վարկավորմամբ իրացման նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրից ստացված եկամուտը 8.0 մլն դրամ է, առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերումից շահաբաժիններից եկամուտը՝ 2.9 մլն դրամ, տոկոսային եկամուտը՝ 170.0 մլն դրամ, որի 2.6%-ը ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրով նախորդ տարիներին տրամադրված վարկերի տոկոսներն են, 59.3%-ը՝ նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների տոկոսներն են, 3.5%-ը գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառությունների տոկոսները, 34.5%-ը ներգրավված միջոցների հաշվին տրամադրված փոխառությունների տոկոսներն են, 0.1%-ը բանկային տոկոսավճարներն ու ավանդների տոկոսներն են:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնադրամի ծախսերը կազմել են 1102.4 մլն դրամ, այդ թվում՝

- հիմնադրամի պահպանման փաստացի տարեկան ծախսերը՝ 129.4 մլն դրամ՝ պլանով նախատեսված 154.5 մլն դրամի դիմաց,
- ծրագրային միջոցառումների իրականացման ծախսերը՝ 971.8 մլն դրամ, այդ թվում՝ ըստ ուղղությունների՝
    1. ՓՄՁ սուբյեկտների առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում՝ 578.2 մլն դրամ,
    2. հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում՝ 167.4 մլն դրամ,
    3. ՓՄՁ սուբեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանն աջակցություն՝ 20.3 մլն դրամ,
    4. ՓՄՁ սուբեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն՝ 6.0 մլն դրամ,
    5. ՓՄՁ սուբեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 6.4 մլն դրամ,
    6. գյուղաբնակ քաղաքացիների հիփոթեքային փոխառությունների ձևակերպման ծախսեր՝ 2.6 մլն դրամ,
    7. ներգրավված միջոցների տոկոսների վճարում՝ 190.9 մլն դրամ,
- այլ ծախսերը՝ 1.2 մլն դրամ:

2010 թվականին Հիմնադրամի ֆինանսական միջոցների մուտքերը կազմել են 4719.7 մլն դրամ, որի 45.5%-ը՝ 2148.5 մլն դրամը, կազմում են մուտքերը՝ տրամադրված վարկերի ու փոխառությունների վերջնական և մասնակի մարումներից, այդ թվում՝ ներգրավված միջոցների հաշվին տրամադրված փոխառությունների մարումից՝ 388.9 մլն դրամ, ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի վերջնական և մասնակի մարումներից՝ 381.0 մլն դրամ, նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների վերջնական և մասնակի մարումներից՝ 1315.4 մլն դրամ, գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառությունների մասնակի մարումներից՝ 59.3 մլն դրամ, հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությունների մասնակի մարումներից՝ 2.0 մլն դրամ, «Արցախինվեստ» հիմնադրամի մարումներից՝ 2.0 մլն դրամ: Դրամական մուտքերի 37.3%-ը կազմում են մուտքերը պետական բյուջեից, 3.8%-ը՝ իրականացրած գործունեությունից՝ ներառյալ տոկոսային եկամուտները և շահաբաժինները, 8.5%-ը՝ ներգրավված միջոցներն են:

2010 թվականին Հիմնադրամի ֆինանսական միջոցների ելքերը կազմել են 4670.5 մլն դրամ, այդ թվում՝ նպատակային ծրագրերով տրամադրված փոխառությունների ընդհանուր գումարը կազմում է 1006.7 մլն դրամ, ՓՄՁ ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակում տրամադրված փոխառությունների գումարը կազմում է 675.78 հազ. դրամ, գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված հիփոթեքային փոխառությունները՝ 184.3 մլն դրամ,

հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրով ներդրված գումարը՝ 856.3 մլն դրամ:

2010 թվականին Հիմնադրամը առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերմանն է ուղղել 778.0 մլն դրամ:

Հիմնադրամը ներգրավված միջոցների գծով ձևավորված պարտավորությունների կատարմանն է ուղղել 809.4 մլն դրամ:

Հիմնադրամի սեփական կապիտալը 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 4432.9 մլն դրամ, որը կազմում է Հիմնադրամի ակտիվների 47.4%-ը:

2010 թվականին Հիմնադրամի ֆինանսական հոսքերի մասին տեղեկությունները ներկայացված են թիվ 12 աղյուսակում:

Հիմնադրամի՝ ըստ գոյացման աղբյուրների, ֆինանսական միջոցների և դրանց՝ ըստ ուղղությունների, տեղաբաշխման մասին տեղեկությունները բերված են թիվ 3 հավելվածում:

## Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ֆինանսական միջոցների հոսքերի մասին

Աղյուսակ 12

/հազ.դրամ/

| | | |
|---|---|---|
| Մնացորդը առ 01.01.2010թ. | | 53 897,09 |
| ՀՀ | ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ, այդ թվում՝ | 4 719 705,74 |
| 1 | ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ | 1 759 000,00 |
| 2 | ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ | 400 000,00 |
| 3 | ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ | 447 573,93 |
| | *մարում* | *388 851,90* |
| | *տոկոսների վճարում* | *58 722,03* |
| 4 | ՄԱՐՈՒՄՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ | 1 759 676,80 |
| | *վերջնական մարում* | *152 525,63* |
| | *մասնակի մարում* | *228 436,64* |
| | *նպատակային ծրագրերից* | *1 315 415,13* |
| | *գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառություններից* | *59 296,54* |
| | *հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառություններից* | *2 002,86* |
| | *«Արցախինվեստ» հիմնադրամի մարում* | *2 000,00* |
| 5 | ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, այդ թվում՝ | 111 265,28 |
| *5. 1* | Տոկոսներ՝ | 111 076,35 |
| | *տրամադրված վարկերից* | *4 395,52* |
| | *նպատակային ծրագրերից* | *100 722,83* |
| | *գյուղաբնակ քաղաքացիներին տրամադրված փոխառություններից* | *5 957,99* |
| *5. 2* | Բանկային տոկոսավճար<br>*/հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկված/* | 188,93 |
| 6 | ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ<br>հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրի շրջանակում. | 207 963,64 |
| | *միջոցների վերադարձ* | 199 923,75 |
| | *եկամուտ* | 8 039,89 |
| 7 | Շահաբաժին առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռքբերումից | 2 857,00 |
| 8 | Տրանսպորտային պարկի վերազինման աջակցության ծրագրի շրջանակում, այդ թվում՝ | 20 787,50 |
| | *կանխավճար* | *4 797,00* |
| 9 | Շրջկենտրոններում բնակվող քաղաքացիներին աջակցության ծրագրի շրջանակում, այդ թվում՝ | 9 541,92 |
| | *կանխավճար* | *9 541,92* |
| 10 | Այլ մուտքեր | 1 039,67 |

| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԼՔԵՐ, այդ թվում՝ | | 4 670 531.72 |
|---|---|---|
| 1 | ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն | 675,78 |
| 2 | ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցություն | 5 956,16 |
| 3 | ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն | 6 445,11 |
| 4 | ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղման աջակցություն | 20 315,78 |
| 5 | ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում | 578179.34 |
| 6 | Հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում | 167 386,68 |
| 7 | Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում | 24 141,85 |
| 8 | Հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում | 856 264,09 |
| 9 | Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին | 186 932,14 |
| | *փոխառություն* | *184 330,00* |
| | *այլ ծախս* | *2 602,14* |
| 10 | Նպատակային ծրագրեր | 1 006 676,00 |
| 11 | Առևտրային ընկերությունների բաժնետոմսերի ձեռք բերում | 778 000,00 |
| 12 | Ներգրավված միջոցների վերադարձ | 809 408,35 |
| 13 | ԼՂՀ տրանսպորտային պարկի վերազինման աջակցություն | 99 500,00 |
| 14 | Պահպանման ծախսեր | 129 402,29 |
| 15 | Այլ ծախս | 1 248,16 |
| Մնացորդը առ 01.01.2011թ. | | 103071.11 |

Արցախի ներդրումային հիմնադրամի
գլխավոր տնօրեն՝ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված 1

Բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների ձեռքբերման և վերանորոգման պետական ֆինանսական աջակցության դինամիկան 2009-2010թթ.

| /Հ | | Տեղեկանքներ /հատ/ | | | Հաստատված հայտեր /հատ/ | | | Ֆինանսավորում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Հայտեր / հատ/ | | | Գումարը | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | 2009թ. | | | | 2010թ. | | | | | |
| | | 2009թ | 2010թ | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | 2009թ | 2010թ. | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | 2009թ | 2010թ. | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | մլն ՀՀ դրամ | հազ. ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համար-ժեք մլն ՀՀ դրամ | Ընդա-մենը մլն ՀՀ դրամ | մլն ՀՀ դրամ | հազ. ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համար-ժեք մլն ՀՀ դրամ | Ընդա-մենը մլն ՀՀ դրամ | Աճը (-) 2010թ 2009թ նկատմամբ %-ներով |
| | Ընդամենը , այդ թվում | 331 | 433 | **30,82** | 304 | 375 | **23,4** | 229 | 376 | **64,2** | 810,9 | 818,2 | 310,1 | 1121,0 | 1723,3 | 1560,6 | 571,2 | 2294,5 | **104,68** |
| | գնում | 59 | 115 | **94,92** | 47 | 98 | **108,5** | 28 | 92 | **228,6** | 245 | 226 | 86 | 331 | 891,1 | 550 | 201 | 1092,4 | **230,02** |
| | վերանորոգում | 235 | 273 | **16,17** | 215 | 241 | **12,1** | 171 | 243 | **42,1** | 369 | 423 | 160 | 530 | 488,7 | 1011 | 370 | 858,6 | **62,12** |
| | կառուցում | 37 | 45 | **21,62** | 42 | 36 | **-14,3** | 30 | 41 | **36,7** | 196 | 169 | 64 | 260 | 343,5 | 0 | 0 | 343,5 | **31,94** |
| 1 | Ստեփանակերտ, այդ թվում՝ | 255 | 346 | **35,69** | 239 | 307 | **28,5** | 177 | 298 | **68,4** | 692,8 | 652,5 | 247,3 | 940,1 | 1532,0 | 1403,6 | 513,7 | 2045,7 | **117,61** |
| ,1 | գնում | 50 | 101 | **102,00** | 42 | 90 | **114,3** | 24 | 81 | **237,5** | 230,0 | 205,3 | 77,81 | 307,8 | 839,3 | 525,8 | 192,44 | 1031,7 | **235,19** |
| ,2 | վերանորոգում | 167 | 208 | **24,55** | 159 | 184 | **15,7** | 127 | 178 | **40,2** | 297,6 | 294,8 | 111,73 | 409,3 | 357,2 | 877,8 | 321,27 | 678,5 | **65,75** |
| ,2 | կառուցում | 35 | 37 | **5,7** | 38 | 33 | **-13,2** | 26 | 39 | **50,0** | 165,2 | 152,4 | 57,76 | 223,0 | 335,5 | 0,0 | 0,00 | 335,5 | **50,48** |
| 2 | Ասկերան, այդ թվում՝ | 21 | 18 | **-14,3** | 18 | 9 | **-50,0** | 16 | 9 | **-43,8** | 40,6 | 43,7 | 16,56 | 57,2 | 23,7 | 40,3 | 14,75 | 38,45 | **-32,74** |
| ,1 | գնում | 2 | 4 | **100,0** | 0 | 3 | | 0 | 3 | | 0 | 0 | 0 | 0,0 | 12,3 | 24,3 | 8,9 | 21,2 | |
| ,2 | վերանորոգում | 18 | 9 | **-50,0** | 17 | 5 | **-70,6** | 15 | 5 | **-66,7** | 20,6 | 43,7 | 16,56 | 37,2 | 8,4 | 16,0 | 5,9 | 14,3 | **-61,64** |
| ,3 | կառուցում | 1 | 5 | **400,0** | 1 | 1 | **0,0** | 1 | 1 | **-** | 20,0 | 0,0 | 0,0 | 20,0 | 3,0 | 0,0 | 0,0 | 3,0 | **-** |
| 3 | Մարտունի, այդ թվում՝ | 21 | 13 | **-38,1** | 16 | 4 | **-75,0** | 13 | 11 | **-15,4** | 29,6 | 55,0 | 20,85 | 50,4 | 30,5 | 3,2 | 1,17 | 31,7 | **-37,22** |
| ,1 | գնում | 3 | 1 | **-66,7** | 1 | 0 | **-100,0** | 2 | 0 | **-100,0** | 6,2 | 20,6 | 7,81 | 14,0 | 0,0 | 0,0 | 0 | 0,0 | **-100,0** |
| ,2 | վերանորոգում | 17 | 12 | **-29,4** | 14 | 4 | **-71,4** | 10 | 11 | **10,0** | 15,6 | 34,4 | 13,04 | 28,6 | 30,5 | 3,2 | 1,17 | 31,7 | **10,59** |
| ,3 | կառուցում | 1 | 0 | **-100,0** | 1 | 0 | **-** | 1 | 0 | **-** | 7,8 | 0 | 0 | 7,8 | 0,0 | 0 | 0 | 0,0 | **-** |
| 4 | Մարտակերտ, այդ թվում՝ | 11 | 13 | **18,2** | 7 | 15 | **114,29** | 6 | 14 | **133,3** | 13,7 | 16,6 | 6,29 | 20,0 | 31,4 | 39,7 | 14,53 | 46,0 | **129,90** |
| ,1 | գնում | 2 | 3 | **50,0** | 1 | 2 | **100,0** | 1 | 3 | **200,0** | 2,9 | 0 | 0 | 2,9 | 10,4 | 0 | 0 | 10,4 | **259,66** |
| ,2 | վերանորոգում | 9 | 7 | **-22,2** | 5 | 11 | **120,0** | 4 | 10 | **150,0** | 10,8 | 0 | 0 | 10,8 | 16,0 | 40 | 14,5 | 30,5 | **182,69** |
| ,3 | կառուցում | 0 | 3 | | 1 | 2 | **-** | 1 | 1 | **-** | 0 | 16,6 | 6,29 | 6,3 | 5 | 0,0 | 0,00 | 5,0 | **-** |
| 5 | Շուշի, այդ թվում՝ | 23 | 18 | **-21,7** | 21 | 18 | **-14,29** | 15 | 24 | **60,0** | 25,9 | 50,4 | 19,1 | 45,0 | 49,8 | 66,7 | 24,4 | 74,2 | **64,91** |
| ,1 | գնում | 2 | 4 | **100,0** | 3 | 3 | **0,0** | 1 | 5 | **400,0** | 6,3 | 0 | 0 | 6,3 | 29,1 | 0 | 0 | 29,1 | **-** |
| ,2 | վերանորոգում | 21 | 14 | **-33,3** | 18 | 15 | **-16,67** | 14 | 19 | **35,7** | 19,6 | 50,4 | 19,1 | 38,7 | 20,7 | 66,7 | 24,4 | 45,1 | **16,56** |
| ,3 | կառուցում | 0 | 0 | | 0 | 0 | | 0 | 0 | | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | |

| /Հ | | Տեղեկանքներ /հատ/ | | | Հաստատված հայտեր /հատ/ | | | Ֆինանսավորում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2009թ | 2010թ | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | | | | Հայտեր / հատ/ | | | Գումարը | | | | | | | | |
| | | | | | 2009թ | 2010թ. | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | 2009թ | 2010թ. | Աճը (-) 2009թ 2008թ նկատ-մամբ %-ներով | 2009թ. | | | | 2010թ. | | | | Աճը (-) 2010թ 2009թ նկատմամբ %-ներով |
| | | | | | | | | | | | մլն ՀՀ դրամ | հազ. ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համար-ժեք մլն ՀՀ դրամ | Ընդա-մենը մլն ՀՀ դրամ | մլն ՀՀ դրամ | հազ. ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլարին համար-ժեք մլն ՀՀ դրամ | Ընդա-մենը մլն ՀՀ դրամ | |
| 6 | Հաղրութ, այդ թվում` | 3 | 24 | **700,0** | 3 | 21 | **600,0** | 2 | 20 | **900,0** | 8,3 | 0 | 0 | 8,3 | 55,9 | 7 | 3 | 58,5 | **604,80** |
| ,1 | գնում | 0 | 2 | **0** | 0 | 0 | - | 0 | 0 | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | - |
| ,2 | վերանորոգում | 3 | 22 | **633,33** | 2 | 21 | **950,0** | 1 | 20 | **1900,0** | 5 | 0 | 0 | 5,0 | 55,9 | 7 | 3 | 58,5 | **1070,0** |
| ,3 | կառուցում | 0 | 0 | | 1 | 0 | - | 1 | 0 | - | 3,3 | 0 | 0 | 3,3 | 0,0 | 0 | 0 | 0,0 | - |
| 7 | Քաշաթաղ, այդ թվում` | 0 | 1 | | 0 | 1 | | 0 | 0 | | 0,0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0,0 | |
| ,1 | գնում | 0 | 0 | **0** | 0 | 0 | - | 0 | 0 | - | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | - |
| ,2 | վերանորոգում | 0 | 1 | | 0 | 1 | | 0 | 0 | | 0 | 0 | 0 | 0,0 | 0 | 0 | 0 | 0,0 | |
| ,3 | կառուցում | 0 | 0 | | 0 | 0 | - | 0 | 0 | - | 0,0 | 0 | 0 | 0,0 | 0,0 | 0 | 0 | 0,0 | - |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
### հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցման ծրագրի շրջանակում 2008-2010թթ. կատարված աշխատանքների մասին

/հազար դրամ/

| Շինարարության բաղադրա-տարրերը | Ասկերան | | Շուշի | | Հադրութ | Մարտակերտ | | | Մարտունի | Ստեփանակերտ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ն.Ստեփանյան 10դ1, 10դ2 | 3x12 բնակ. շենք | Ն. Դուման 2 | Ա.Մանուկյան | 9 բնակ. շենք | 18 բնակ. շենք | 12 բնակ. շենք | 20 առանձ-նատուն | 7 առանձնատուն | Աջափնյակ թաղ. | Կահույքի ֆաբրիկայի տարածք | «Փոք Դիլիջանի» ՓԲԸ | «Կամուրջ» ՍՊԸ | |
| Հողատարածքի ձեռքբերում | 549,2 | 1657,2 | | | 244,0 | 750,7 | | 4462,5 | 2530,0 | 12631,6 | - | | | 22825,2 |
| Շինության արժեք | | | | 20800,0 | | | | | | | | | | 20800,0 |
| Սեփականության իրավունքի գրանցում | 341,6 | 34,6 | 1070,9 | 1331,0 | 21,7 | 24,2 | | 113,4 | 21,0 | 36,4 | | 776,4 | | 3771,1 |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում | 3475,0 | 4590,0 | 9715,0 | 13500,0 | 2844,0 | 4192,0 | 3410,0 | 14400,0 | 23500,0 | 237,6 | - | - | | 79863,6 |
| Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն | 240,0 | | 400,0 | 600,0 | 240,0 | 320,0 | 200,0 | | 300,0 | | - | - | | 2300,0 |
| Շինարարության թույլտվության ստացում | 100,0 | 100,0 | 4,0 | | 35,0 | 70,0 | | | 60,0 | | - | - | | 369,0 |
| Շինարարական աշխատանքներ՝ կապալի պայմանագրի շրջանակում | 335568,4 | | 446800,0 | | 105550,4 | 232117,8 | | | 146396,0 | 1307,3 | 433453,0 | - | | 1701192,8 |
| Տեխնիկական վերահսկողություն | 2637,6 | | 3106,0 | | 471,5 | 1099,7 | | | 1047,6 | | - | - | | 8362,3 |
| Հեղինակային հսկողություն | | | | | | 523,8 | | | 314,3 | | | | | 838,1 |
| Բնակարանների ձեռք բերում իրացման նպատակով | - | | - | | - | - | . | | | | - | 362640,0 | 100000,0 | 462640,0 |
| Այլ ծախսեր | 56,7 | | 20,3 | 5,0 | 30,3 | | 5,0 | | 5,0 | 49,3 | | 347,0 | | 518,6 |
| **Ընդամենը** | **342968,5** | **6381,8** | **461116,1** | **36236,0** | **109436,8** | **239098,2** | **3615,0** | **18975,9** | **174173,8** | **14262,2** | **433453,0** | **363763,4** | **100000,0** | **2303480,7** |
| 2008 թվականին | 17989,1 | | 115556,5 | | 2628,5 | 4474,9 | | | | | 150000,0 | | | 290649,0 |
| 2009 թվականին | 229585,7 | | 209208,2 | | 41564,5 | 101069,9 | | | 121843,0 | | 90000,0 | 363296,4 | | 1156567,7 |
| 2010 թվականին | 95393,7 | 6381,8 | 136351,4 | 36236,0 | 65243,8 | 133553,4 | 3615,0 | 18975,9 | 52330,8 | 14262,2 | 193453,0 | 467,0 | 100000,0 | 856264,0 |